ՄԱՅՐ ԱԹՈՌ

Հունվար 1-ին Ամանորի առթիվ Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցվեց։

Պատարագիչն էր Տ. Սահակ ծայրագույն վարդապետը, որը և ավուր պատշաճի քարոզ խոսեց։ Ս. Պատարագից հետո կատարվեց Հայրապետական հանդիսավոր մաղթանք։

Պատարագից հետո Մայր Աթոռի Միաբանությունը ներկայացավ Վեհափառ Հայրապետին՝ իր շնորհավորանքը մատուցելու նոր տարվա առթիվ։

***

Հունվարի 5-ին, Ճրագալույցի երեկոյան Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցվեց։

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Ջ։

Պատարագում էր Տ. Սահակ ծայրագույն վարդապետը, որը և ավուր պատշաճի քարոզեց։

***

Հունվարի 6-ին, Ս. Ծննդյան տոնի օրը, Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցվեց և տեղի ունեցավ Ջրօրհնյաց հանդեսի արարողությունը ժողովրդի հոծ բազմության ներկայությամբ։

Տաճարում ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Օրվա պատարագիչն էր Գեր. Տ. Սուրեն Եպիսկոպոսը, որը և ավուր պատշաճի քարոզեց։

***

Ամանորի և Ս. Ծննդյան տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի անունով շնորհավորական բազմաթիվ հեռագրեր են ստացվել. դրանց թվում Տանն Կիլիկիո Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսից, Երուսաղեմի Պատրիարք Տ. Կյուրեղ Բ Արքեպիսկոպոսից, Ստամբուլի Պատրիարքական Տեղապահ Տ. Գևորգ Արքեպիսկոպոս Արսլանյանից, ՍՍՌ Միության ու արտասահմանի թեմերի Առաջնորդներից։

***

Փետրվարի 5-ին, Ս. Վարդանանց զորավարաց և 1036 վկայից տոնի օրը, Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցվեց։

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Պատարագում էր Տ. Սահակ ծայրագույն վարդապետը։ Պատարագիչ Հոր ավուր պատշաճի քարոզից հետո հոգեհանգիստ կատարվեց ազգի ու հավատի համար նահատակվածների հիշատակին։

***

Ս. Վարդանանց տոնի օրը Հոգևոր ճեմարանում երեկույթ կազմակերպվեց։

Երեկույթին ներկա էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Ջ։

Երեկույթին ներկա էին նաև Մայր Աթոռի Միաբանության անդամները, Հոգևոր ճեմարանի դասախոսները և բազմաթիվ հյուրեր։

Օրվա նյութի շուրջը ընդարձակ զեկուցումով հանդես եկավ ճեմարանի դասախոս Դ. Ալիշանյանը։ Բանախոսեցին Մայր Աթոռի Միաբանության անդամներ Տ. Սահակ ծայրագույն վարդապետ Տեր-Հովհաննիսյանը և Տ. Կարապետ վարդապետ Ասլամազյանը։

Ճեմարանի մի շարք սաներ հանդես եկան տոնին նվիրված ինքնուրույն հակիրճ զեկուցումներով։

Համերգային բաժնում ելույթ ունեցավ ճեմարանի երգեցիկ խումբը՝ երաժշտագետ Դանիել Ղազարյանի ղեկավարությամբ և Տեր-Նիկողայոս քհ. Բավեյանի գործոն մասնակցությամբ։ Ճեմարանի մի շարք սաներ հանդես եկան արտասանություններով և մեներգների կատարումով։

Վերջում Վեհափառ Հայրապետը իր գոհունակությունը հայտնեց երեկույթի կազմակերպման առթիվ և ջերմ, խրախուսական ու դաստիարակիչ խոսք ուղղելով սաներին՝ օրհնեց նրանց։

***

Վերջերս «Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կեդրոնական Հանձնաժողով»-ի անդամ է ընտրվել Պ. Չարլզ Պետրոսի Զորաբը։ Այս մասին իրազեկ դարձնելով Ն. Ս. Օծության, խնդրել էին Նրա համաձայնությունը։ Ն. Ս. Օծություն Պատրիարք-Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ. Հայրապետական Կոնդակով՝ տրված 1948 թ. 20 փետրվարի, հաճեց «Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կեդրոնական Հանձնաժողով»-ի անդամ հաստատել Պ. Չարլզ Պետրոսի Զորաբին, իր գոհունակությունն արտահայտելով նրա միաձայն ընտրության առթիվ։

***

Վերջերս «Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կեդրոնական Հանձնաժողով»-ի անդամ է ընտրվել Պ. Ռոբերտ Գևորգի Միքայելը։ Այս մասին իրազեկ դարձնելով Ն. Ս. Օծության, խնդրել էին Նրա համաձայնությունը։ Ն. Ս. Օծություն Պատրիարք-Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ. Հայրապետական Կոնդակով՝ տրված 1948 թ. 20 փետրվարի, հաճեց «Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կեդրոնական Հանձնաժողով»-ի անդամ հաստատել Պ. Ռոբերտ Գևորգի Միքայելին, իր գոհունակությունն արտահայտելով նրա միաձայն ընտրության առթիվ։

***

Հարգելով «Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կեդրոնական Հանձնաժողով»-ի միջնորդությունը, Պատրիարք-Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ. Հայրապետական Կոնդակով՝ տրված 1948 թ. 20 փետրվարի, հաճեց Լոնդոնի «Աբգարյան Տրըստ»-ի ավանդապահ հաստատել «Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կեդրոնական Հանձնաժողով»-ի անդամ Պ. Սարգիս Քյուրքճյանին, իր գոհունակությունն արտահայտելով նրա թեկնածության առաջադրման առթիվ։

***

Գեր. Տ. Սուրեն Եպիսկոպոս Թորոսյանը Ադրբեջանի ու Թուրքեստանի թեմի Առաջնորդի պաշտոնով մեկնեց իր պաշտոնատեղին։

***

Երկարատև հիվանդությունից հետո, Թբիլիսիում փետրվարի 13-ին վախճանվեց Թբիլիսիի թեմի նախկին առաջնորդական փոխանորդ Տեր-Սահակ ավագ քահանա Սահակյանը՝ 78 տարեկան հասակում։

Փետրվարի 17-ին տեղի ունեցավ թաղումը։ Թաղմանը ներկա էին բացի հայ հոգևորականներից, նաև վրաց և ռուսաց եկեղեցիների ներկայացուցիչները։